ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
4 դեկտեմբերի 1996 թ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների իրավական ռեժիմը և վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հոդված 2. Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը

Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումը (այսուհետ՝ միջոցների փոխանցում) վճարողի կողմից վճարման հանձնարարականի ներկայացմամբ սկսվող՝ դրանում նշված շահառուին նախատեսված գումարը վճարելու նպատակով իրականացվող հաջորդական գործողությունների համակցություն է: Միջոցների փոխանցումը ներառում է վճարողի վճարման հանձնարարականը կատարելու նպատակով վճարողի բանկի կամ միջնորդ բանկի կողմից հաջորդ բանկին ուղարկված վճարման հանձնարարականը: Միջոցների փոխանցումն ավարտվում է շահառուի բանկի կողմից շահառուի օգտին վճարողի վճարման հանձնարարականի ակցեպտավորմամբ:

Հոդված 3. Վճարման հանձնարարականը

1. Վճարման հանձնարարականը (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) բանկին տրված հանձնարարությունն է՝ վճարել կամ հանձնարարել այլ բանկի՝ վճարել շահառուին հաստատագրված կամ հաշվարկվող գումար, եթե՝

ա) հանձնարարականը վճարման ժամկետից բացի, շահառուին վճարելու այլ պայման չի սահմանում, և

բ) ստացող բանկը հատուցում է ստանում ուղարկողից՝ դեբետագրելով ուղարկողի հաշիվը կամ այլ ձևով, և

գ) ուղարկողը ստացող բանկին է հաղորդում հանձնարարությունն ուղղակիորեն կամ միջնորդավորված եղանակով՝ գործակալի, միջոցների փոխանցման կամ հեռահաղորդակցման համակարգի միջոցով:

Եթե սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված պահանջներին համապատասխանող հանձնարարությունը նախատեսում է շահառուին կատարել մեկից ավելի վճարում, ապա այն առանձին վճարման հանձնարարական է յուրաքանչյուր վճարման համար:

Վճարման հանձնարարականը համարվում է ուղարկված, երբ այն ուղարկվում է ստացող բանկին:

2. Վճարման հանձնարարականի գումարը վճարման, հանձնարարականում նշված՝ շահառուին վճարման ենթակա գումարն է:

3. Կենտրոնական բանկը, վճարահաշվարկային համակարգի գործունեության սահունությունն ապահովելու նպատակով, կարող է սահմանել վճարման հանձնարարականների, դրանք չեղյալ համարելու հանձնարարականների և տեղեկացումների վավերապայմանները:

Հոդված 4. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

1. Միջոցների փոխանցման գործարքի մասնակիցները միջոցների փոխանցումն իրականացնելու համար անհրաժեշտ գործարքների կողմերն են՝ ուղարկողը, ստացող բանկը և շահառուն:

2. Ուղարկողը վճարման հանձնարարականը ստացող բանկին ուղարկող (հաղորդող) անձն է: Ուղարկող կարող են լինել վճարողը, վճարողի բանկը և միջնորդ բանկը (բանկերը):

3. Վճարողը միջոցների փոխանցման առաջին վճարման հանձնարարականը ներկայացնողն է:

4. Վճարողի բանկը վճարողից վճարման հանձնարարական ստացող բանկն է: Եթե վճարողը բանկ է, ապա այն նաև վճարողի բանկն է:

5. Միջնորդ բանկը ցանկացած ստացող բանկն է, բացի վճարողի և շահառուի բանկերից:

6. Ստացող բանկն այն բանկն է, որին հասցեագրված է ուղարկողի վճարման հանձնարարականը (վճարողի բանկը, միջնորդ բանկը (բանկերը) և շահառուի բանկը):

7. Շահառուն վճարողի վճարման հանձնարարականի գումարի փոխանցման

վերջնական հասցեատերն է:

8. Շահառուի բանկը վճարողի վճարման հանձնարարականում նշված այն բանկն է՝

ա) որում գտնվում է շահառուի՝ վճարողի վճարման հանձնարարականի համաձայն կրեդիտագրման ենթակա հաշիվը, կամ

բ) որը վճարողի վճարման հանձնարարականին համապատասխան պետք է վճարման հանձնարարականի գումարը վճարի շահառուին:

9. Բանկը, դրա մասնաճյուղերը և գործառնական գրասենյակները (կետերը) համարվում են միջոցների փոխանցման ինքնուրույն մասնակիցներ: Սույն օրենքով բանկերի համար սահմանված միջոցների փոխանցման կապակցությամբ ծագող իրավունքներն ու պարտավորությունները նույն ձևով տարածվում են բանկի մասնաճյուղերի և գործառնական գրասենյակների (կետերի) վրա:

Հոդված 5. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Միջոցների փոխանցման համակարգերը կենտրոնական բանկի, բանկի կամ բանկերի հաղորդակցման մասնագիտացված համակարգերն են, որոնց միջոցով վճարման հանձնարարականները, դրանք չեղյալ համարելու հանձնարարականները և (կամ) հաշիվների մասին տեղեկացումները (քաղվածքները) փոխանցվում են դրանցում հասցեագրված անձանց:

Հոդված 6. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱՑԱՏՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Միջոցների փոխանցման պայմանագիր կնքելիս բանկը պարտավոր է հաճախորդին պատշաճ կերպով ծանոթացնել նրա իրավունքներին, պարտականություններին և պայմանագրի էական պայմաններին:

2. Բանկի կողմից սույն հոդվածով սահմանված իր պարտավորությունը չկատարելու դեպքում հաճախորդի հայցով պայմանագիրը կարող է անվավեր ճանաչվել:

Հոդված 7. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՕՐԸ: ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՊԱՀԸ

1. Միջոցների փոխանցման գործառնական օրը (այսուհետ՝ գործառնական օր) օրացուցային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում բանկն ընդունում, ակցեպտավորում և (կամ) ուղարկում (փոխանցում) է վճարման հանձնարարականները, դրանք չեղյալ համարելու հանձնարարականները, ինչպես նաև տրամադրում է հաշվի մասին տեղեկացումներ (քաղվածքներ):

Միջոցների փոխանցման գործառնական օրը բանկը սահմանում է ինքնուրույն: Բանկը պարտավոր է հաճախորդի առաջին իսկ պահանջով կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքելիս վերջինիս տեղեկացնել միջոցների փոխանցումների բանկի գործառնական ժամերի մասին:

2. Եթե վճարման հանձնարարականը կամ այն չեղյալ համարելու հանձնարարականը ստացվել է միջոցների փոխանցման գործառնական օրվա ավարտից հետո, ապա դրանք ստացված են համարվում միջոցների փոխանցման հաջորդ գործառնական օրվա սկզբին:

Գ Լ ՈՒ Խ II

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՈՒՂԱՐԿՈՒՄԸ, ԱԿՑԵՊՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼԸ

Հոդված 8. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ

1. Անվտանգության արարողակարգը՝ վճարման հանձնարարականների, այլ հաղորդագրությունների պատկանելության հավաստիության ապահովման և դրանցում տեղ գտած սխալների բացահայտման (վավերացման) նպատակով միջոցների փոխանցման գործարքի կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ սահմանված արարողակարգն է:

Անվտանգության արարողակարգով կարող են նախատեսվել հատուկ ալգորիթմների, նշանաբառերի, գաղտնաբառերի, գաղտնագրման և ինքնությունը հաստատող այլ միջոցների կիրառումը:

2. Բանկի կիրառած արարողակարգը պետք է ապահովի միջոցների փոխանցման անխոչընդոտ իրականացումը: Ուղարկողն իրավունք ունի ստացող բանկից պահանջել իր տված վճարման հանձնարարականներ, այլ հաղորդագրությունների փոխանցման համար կիրառել պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով նախատեսված անվտանգության այլ արարողակարգ: Ուղարկողի առաջարկած անվտանգության արարողակարգը կիրառելիս ստացող բանկը պատասխանատվություն չի կրում այդ արարողակարգի թերություններով պայմանավորված, ուղարկողի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3. Կենտրոնական բանկը կարող է սահմանել միջոցների փոխանցման համակարգերի կողմից կիրառվող անվտանգության արարողակարգերին ներկայացվող պահանջները:

Հոդված 9. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Վճարման հանձնարարականը վավեր է, եթե այն ուղարկվել է դրանում որպես ուղարկող նշված անձի կամ նրա ներկայացուցչի կողմից:

2. Սույն հոդվածի 1 կետին չհամապատասխանող վճարման հանձնարարականը վավեր է նաև, եթե՝

ա) բանկի և ուղարկողի միջև կնքված պայմանագրի համաձայն, հաճախորդի կողմից կամ նրա անունից բանկին ուղարկված վճարման հանձնարարականը ենթակա է վավերացման որոշակի անվտանգության արարողակարգի միջոցով, և

բ) բանկն այն ընդունել է բարեխղճորեն և բանկի ու ուղարկողի միջև կնքված գրավոր պայմանագրով նախատեսված անվտանգության արարողակարգին և հաճախորդի այլ հրահանգին համապատասխան: Բանկը պարտավոր չէ կատարել ուղարկողի այն հրահանգները, որոնք հակասում են գրավոր պայմանագրին կամ չեն ստացվել՝ ստացող բանկին համապատասխան գործողություն ձեռնարկելու հնարավորություն ընձեռող եղանակով և ժամկետում:

3. Սույն հոդվածի 2 կետին համապատասխան ընդունված վճարման հանձնարարականն անվավեր է, եթե ուղարկողն ապացուցում է, որ՝

ա) վճարման հանձնարարականը չի ուղարկվել այն անձի (անձանց) կողմից՝

- որին ուղարկողը երբևէ լիազորել կամ վստահել է վճարման հանձնարարականներ ուղարկել, ներկայացնել կամ անվտանգության արարողակարգը գործադրելու հետ կապված գործողություններ կատարել, և

- որը, առանց ստացող բանկի կողմից դրա համար լիազորված լինելու, ուղարկողի տիրապետման ներքո գտնվող աղբյուրներից է ձեռք բերել տվյալ փոխանցումը հնարավոր դարձնող տեղեկությունները՝ անկախ ուղարկողի մեղքի առկայությունից կամ տեղեկությունների ձեռքբերման եղանակից, և

բ) տվյալ վճարման հանձնարարականն ուղարկելիս չեն օգտագործվել ուղարկողի փոխանցման հնարավորությունները կամ միջոցները:

4. Սույն օրենքի 8 հոդվածի 3 կետի համաձայն, կենտրոնական բանկի սահմանած անվտանգության արարողակարգերին ներկայացվող նվազագույն պահանջների առկայության դեպքում, վճարման հանձնարարականը վավեր է, եթե սույն հոդվածի 2 կետով նախատեսված անվտանգության արարողակարգը բավարարում է տվյալ նվազագույն պահանջներին:

5. Փոխանցման մասնակիցների՝ սույն հոդվածի 1, 2 և 4 կետերից բխող իրավունքներն ու պարտականությունները պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով փոփոխվել չեն կարող:

6. Սույն հոդվածը վերաբերում է նաև վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականներին:

Հոդված 10. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. Եթե ստացող բանկն ակցեպտավորում է անվավեր վճարման հանձնարարականը (հոդված 9), և ուղարկողը կատարել է վճարելու իր պարտավորությունը (հոդվածներ 25 և 26), ապա ուղարկողի պահանջով ստացող բանկը պարտավոր է վերադարձնել վճարման հանձնարարականի գումարը և այդ գումարի վրա՝ բանկի կողմից գումարի ստացման օրվանից մինչև այդ գումարն ամբողջությամբ վերադարձնելու օրը հաշվարկված տոկոսները: Ուղարկողը զրկվում է տոկոսներն ստանալու իրավունքից, եթե նա ստացող բանկի կողմից ուղարկված վճարման հանձնարարականն ակցեպտավորելու կամ ուղարկողի հաշիվը դեբետագրելու մասին տեղեկացումը (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) ստանալու պահից հնարավոր կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում բանկին առարկություն չի ներկայացրել:

2. Բանկերի՝ սույն հոդվածով սահմանված պարտավորությունը պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով փոփոխման ենթակա չէ:

Հոդված 11. ՍԽԱԼԸ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ

1. Եթե ուղարկողի վճարման հանձնարարականը փոխանցվել է անվտանգության արարողակարգի պահպանմամբ, սակայն՝

ա) ուղարկողի վճարման հանձնարարականում սխալմամբ նշված է նրա կողմից չնախատեսված շահառու, կամ

բ) ուղարկողի վճարման հանձնարարականում սխալմամբ նշված է ավելի մեծ գումարի վճարում, քան նախատեսված էր նրա կողմից, կամ

գ) ուղարկողը սխալմամբ ուղարկել է նախկինում իր կողմից ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակը, և եթե ուղարկողն ապացուցում է, որ պահպանել է անվտանգության արարողակարգի պահանջները, և որ սխալը կհայտնաբերվեր, եթե ստացող բանկը նույնպես պահպաներ դրանք, ապա ուղարկողը ստացող բանկին պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը, իսկ սույն կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում՝ ուղարկողի վճարման հանձնարարականում սխալմամբ նշված գումարի և ուղարկողի նախատեսված գումարի տարբերությունը: Ստացող բանկը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով շահառուից հետ պահանջել վերջինիս սխալմամբ վճարված գումարը:

2. Եթե՝

ա) սույն հոդվածի 1 կետի համաձայն, սխալ վճարման հանձնարարականն ուղարկողը ստացող բանկին պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը կամ դրա մի մասը, և

բ) ուղարկողը ստացող բանկի կողմից տեղեկացվել է (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) վճարման հանձնարարականն ակցեպտավորելու

կամ ուղարկողի հաշիվը դեբետագրելու մասին,

ապա ուղարկողը պարտավոր է հնարավոր կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերոհիշյալ տեղեկացումը ստանալու պահից վաթսուն օրվա ընթացքում բացահայտել տվյալ սխալը և այդ մասին անմիջապես հայտնել ստացող բանկին: Հակառակ դեպքում, եթե ստացող բանկն ապացուցում է, որ ուղարկողը չի կատարել կամ ուշացումով է կատարել սույն կետով սահմանված իր պարտավորությունը, ուղարկողը պարտավոր է հատուցել սխալի հետևանքով բանկի կրած վնասը, ընդ որում, հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ վճարման հանձնարարականի գումարը:

3. Սույն հոդվածը վերաբերում է նաև վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականներին:

Հոդված 12. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ

1. Եթե ստացող բանկին հասցեագրված վճարման հանձնարարականն ուղարկվում է միջոցների փոխանցումների կամ հաղորդակցման այլ համակարգի միջոցով, ապա համակարգին ուղարկված և համակարգից ստացված վճարման հանձնարարականները միմյանց չհամապատասխանելու դեպքում ստացող բանկը հիմք է ընդունում համակարգից ստացված վճարման հանձնարարականը:

2. Սույն հոդվածի 1 կետը չի վերաբերում կենտրոնական բանկի միջոցների փոխանցման համակարգին: Կենտրոնական բանկը վճարման հանձնարարականների սխալ կատարման համար պատասխանատու է որպես միջնորդ բանկ:

3. Սույն հոդվածը վերաբերում է նաև վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականներին:

Հոդված 13. ՇԱՀԱՌՈՒԻ ՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ

1. Եթե շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականում նշված է չնույնացվող կամ տվյալ բանկին անհայտ շահառուի անունը, հաշվի կամ նույնացման համարը, ապա վճարման հանձնարարականն ակցեպտավորման ենթակա չէ, և ոչ ոք շահառուի իրավունքները ձեռք չի բերում, բացառությամբ սույն հոդվածի 2 կետով նախատեսված դեպքերի:

2. Եթե շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականում նշված շահառուն նույնացվում է անունով և հաշվի կամ նույնացման այլ համարով, սակայն անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, ապա շահառուի բանկը ղեկավարվում է հետևյալ կանոններով՝

ա) բացառությամբ սույն հոդվածի 3 կետով սահմանված դեպքերի, շահառուին նույնացնելիս հիմք է ընդունվում հաշվի կամ նույնացման համարը,

եթե շահառուի բանկը տեղյակ չէ, որ շահառուի անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց: Ընդ որում, շահառուի բանկը պարտավոր չէ պարզել, թե արդյոք անունն ու համարը նույնացնում են նույն անձին.

բ) եթե շահառուի բանկը վճարում է անունով նույնացված անձին կամ տեղյակ է, որ անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, ապա ոչ ոք շահառուի իրավունքներ ձեռք չի բերում, բացառությամբ շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի գումարը ստացած այն անձի, որը, օրենքի կամ պայմանագրի համաձայն, իրավունք ուներ վճարողից վճարում ստանալ: Եթե ոչ ոք շահառուի իրավունքներ ձեռք չի բերում, ապա վճարման հանձնարարականը համարվում է չակցեպտավորված:

3. Եթե սույն հոդվածի 2 կետով նախատեսված վճարման հանձնարարականն ակցեպտավորված է, վճարողի վճարման հանձնարարականում նշված շահառուի անունն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, և շահառուի բանկը վճարումը կատարում է սույն հոդվածի 2 կետի «ա» ենթակետի համաձայն, ապա կիրառվում են հետևյալ կանոնները՝

ա) վճարողը պարտավոր է վճարել վճարման հանձնարարականի գումարը, եթե վճարողը բանկ է.

բ) վճարողը պարտավոր չէ վճարել, եթե վճարողը բանկ չէ և ապացուցում է, որ վճարման հանձնարարականում համարով նույնացված անձը, օրենքի կամ պայմանագրի համաձայն, իրավունք չուներ վճարողից վճարում ստանալ.

գ) վճարողը պարտավոր է վճարել, եթե վճարողը բանկ չէ, իսկ վճարողի բանկն ապացուցում է, որ մինչև իր կողմից վճարողի վճարման հանձնարարականն ակցեպտավորելը, վճարողը տեղյակ էր շահառուին համարով նույնացնելու շահառուի բանկի իրավունքի մասին:

4. Եթե սույն հոդվածի 2 կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում շահառուի բանկը վճարում է վճարման հանձնարարականում համարով նույնացված անձին, իսկ վերջինս իրավունք չուներ վճարողից վճարում ստանալ, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այդ անձից հատուցում կարող է պահանջել՝

ա) վճարողը, եթե վերջինս պարտավոր է վճարել վճարման հանձնարարականում նշված գումարը՝ համաձայն սույն հոդվածի 3 կետի, կամ

բ) վճարողի բանկը, եթե վճարողը բանկ չէ և պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականում նշված գումարը:

Հոդված 14. ՄԻՋՆՈՐԴ ԲԱՆԿԻ և ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿԻ ՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ

1. Եթե վճարման հանձնարարականում նշված միջնորդ բանկը կամ շահառուի բանկը նույնացված է միայն համարով (կոդով), ապա ստացող բանկը դրանց նույնացնելիս, հիմք է ընդունում միայն միջնորդ բանկի կամ շահառուի բանկի համարը և պարտավոր չէ պարզել, թե արդյոք համարը նույնացնում է

տվյալ բանկը, իսկ ուղարկողը պարտավոր է հատուցել միջնորդ բանկի կամ շահառուի բանկի համարը հիմք ընդունելով՝ վճարման հանձնարարականը կատարելու կամ կատարելու փորձի հետևանքով ստացող բանկին պատճառած վնասները:

2. Եթե վճարման հանձնարարականում նշված միջնորդ բանկը կամ շահառուի բանկը նույնացվում է անվանումով և համարով (կոդով), սակայն անվանումն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, ապա, նրանց նույնացնելիս, կիրառվում են հետևյալ կանոնները՝

ա) եթե ուղարկողը բանկ է, ստացող բանկը կարող է հիմք ընդունել համարը, եթե ստացող բանկը վճարման հանձնարարականը կատարելու պահին տեղյակ չէ, որ վճարման հանձնարարականում նշված անվանումն ու համարը նույնացնում են տարբեր անձանց: Ընդ որում, ստացող բանկը պարտավոր չէ պարզել, թե արդյոք անվանումն ու համարը նույնացնում են նույն բանկը: Ուղարկողը պարտավոր է հատուցել միջնորդ բանկի կամ շահառուի բանկի համարը հիմք ընդունելով՝ վճարման հանձնարարականը կատարելու կամ կատարելու փորձի հետևանքով ստացող բանկին պատճառած վնասները.

բ) եթե ուղարկողը բանկ չէ, և ստացող բանկն ապացուցում է, որ ուղարկողը, մինչև վերջինիս վճարման հանձնարարականն իր կողմից ակցեպտավորելը, տեղյակ էր ստացող բանկի՝ միջնորդ բանկին կամ շահառուի բանկին միայն համարով նույնացնելու իրավունքի մասին (նույնիսկ, եթե վճարման հանձնարարականը նշում է վերջինիս անվանումն ու համարը), ապա կիրառվում է սույն կետի «ա» ենթակետը.

գ) անկախ այն հանգամանքից՝ ուղարկողը բանկ է, թե ոչ, ստացող բանկը կարող է հիմք ընդունել միջնորդ բանկի կամ շահառուի բանկի անվանումը, եթե ստացող բանկը վճարման հանձնարարականը կատարելու պահին տեղյակ չէ, որ վճարման հանձնարարականում նշված անվանումն ու համարը նույնացնում են տարբեր անձանց: Ընդ որում, ստացող բանկը պարտավոր չէ պարզել, թե արդյոք անվանումն ու համարը նույնացնում են նույն բանկը.

դ) եթե ստացող բանկը, տեղյակ լինելով, որ վճարման հանձնարարականում նշված միջնորդ բանկի կամ շահառուի բանկի անվանումն ու համարը նույնացնում են տարբեր անձանց, այնուամենայնիվ, նրանց նույնացնելիս հիմք է ընդունել միայն անվանումը կամ միայն համարը, ապա դա համարվում է ստացող բանկի՝ սույն օրենքի 20 հոդվածի 1 կետի «ա» ենթակետով սահմանված պարտավորության ոչ պատշաճ կատարում:

Հոդված 15. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆ ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼԸ

1. Ստացող բանկը (բացի շահառուի բանկից) վճարման հանձնարարականն ակցեպտավորում է, երբ կատարում է վճարման հանձնարարականը, բացառությամբ սույն հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերի:

2. Բացառությամբ սույն հոդվածի 3 և 4 կետերով նախատեսված դեպքերի,

վճարման հանձնարարականը շահառուի բանկի կողմից ակցեպտավորված է համարվում՝

ա) երբ բանկը վճարում է շահառուին կամ նրան տեղեկացնում է ուղարկում (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) վճարման հանձնարարականի ստացման կամ վճարման հանձնարարականի ստացման կապակցությամբ շահառուի հաշիվը կրեդիտագրելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տեղեկացման մեջ նշված է, որ շահառուն չի կարող տնօրինել ստացված միջոցները մինչև ուղարկողի կողմից վճարման հանձնարարականի գումարը վճարելը, կամ որ բանկը մերժում է վճարման հանձնարարականը (հոդված 16).

բ) երբ ուղարկողը վճարում է շահառուի բանկին վճարման հանձնարարականի գումարը, կամ

գ) վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ շահառուի բանկի գործառնական օրվա սկզբին, եթե այդ պահին ուղարկողը վճարել է բանկին վճարման հանձնարարականի գումարը, կամ ուղարկողի՝ տվյալ բանկում գտնվող հաշվի մնացորդը բավարար է վճարման հանձնարարականի գումարը հատուցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարման հանձնարարականը մերժվել է մինչև տվյալ գործառնական օրվա սկիզբը, կամ՝

- շահառուի բանկի գործառնական օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, կամ

- վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, եթե ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրը սկսվում է ավելի ուշ, քան ստացող բանկի գործառնական օրը:

3. Վճարման հանձնարարականը մինչև ստացող բանկի կողմից վճարման հանձնարարականն ստանալը ակցեպտավորված չի համարվում: Սույն հոդվածի 2 կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումը տեղի չի ունենում, եթե դրանում նշված շահառուն տվյալ բանկում հաշիվ չունի, կամ շահառուի՝ վճարման հանձնարարականում նշված հաշիվը փակված է, կամ բանկն օրենքով նախատեսված դեպքերում իրավունք չունի շահառուի հաշվին միջոցներ հաշվեգրել կամ ստանալ:

4. Վճարման հանձնարարականը վճարողի բանկի կողմից ակցեպտավորված չի համարվում մինչև վճարման օրը, եթե տվյալ բանկը շահառուի բանկն է, կամ մինչև կատարման օրը, եթե տվյալ բանկը շահառուի բանկը չէ: Եթե վճարողի բանկը կատարում է վճարման հանձնարարականը մինչև դրանում սահմանված կատարման օրը կամ վճարում է դրանում նշված շահառուին մինչև վճարման օրը, իսկ վճարողը հետագայում վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական է տալիս սույն օրենքի 17 հոդվածի համաձայն, ապա վճարողը պարտավոր չէ բանկին վճարել վճարման

հանձնարարականի գումարը, իսկ բանկը կարող է այդ գումարը պահանջել շահառուից՝ օրենքով սահմանված կարգով:

5. Վճարման հանձնարարականի ակցեպտավորումը բացառում է դրա հետագա մերժումը:

Հոդված 16. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՄԵՐԺԵԼԸ

1. Ստացող բանկը կարող է վճարման հանձնարարականը մերժել՝ այդ մասին (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) տեղեկացնելով ուղարկողին: Վճարման հանձնարարականը համարվում է մերժված՝ տեղեկացումը ստանալու պահից:

2. Ստացող բանկը (բացի շահառուի բանկից) ուղարկողի վճարման հանձնարարականը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է ուղարկողին վճարման հանձնարարականի գումարի դիմաց տոկոսներ վճարել կատարման օրվանից մինչև վճարման հանձնարարականը մերժելու օրը ներառյալ, եթե՝

ա) վճարման հանձնարարականի կատարման օրվա դրությամբ ուղարկողի հաշվի մնացորդը բավարար է վճարման հանձնարարականը կատարելու համար, և

բ) վճարման հանձնարարականը չի մերժվել մինչև կատարման օրվա ավարտը, և

գ) ուղարկողի տվյալ հաշվի մնացորդի վրա տոկոս չի հաշվարկվում: Եթե ուղարկողի հաշվի մնացորդը (կատարման օրվանից մինչև ուղարկողի կողմից վճարման հանձնարարականը մերժելու տեղեկացումն ստանալու օրը ներառյալ) նվազում է, ապա ստացող բանկի կողմից այդ ժամանակահատվածի համար վճարվող տոկոսագումարը համապատասխանորեն նվազեցվում է:

3. Չակցեպտավորված վճարման հանձնարարականը համարվում է մերժված այն պահից, երբ՝

ա) ստացող բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչվել, եթե տվյալ բանկը շահառուն չէ, կամ

բ) ստացող բանկի նկատմամբ սկսվել է սնանկացման վարույթ՝ նրա նկատմամբ նախնական խնամակալ, խնամակալ կամ լուծարային կառավարիչ է նշանակվել, կամ

գ) ստացող բանկը դադարեցնում կամ հրաժարվում է վճարումներ կատարել կամ այդ մասին տեղեկացնում է ուղարկողին:

4. Վճարման հանձնարարականի մերժումը բացառում է դրա հետագա ակցեպտավորումը:

Հոդված 17. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼԸ: ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼԸ

1. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելը տվյալ վճարման հանձնարարականի գումարի փոխանցումը դադարեցնելն է՝ ուղարկողին տվյալ գումարն անմիջապես վերադարձնելու պայմանով: Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու դեպքում դրա ակցեպտավորումը վերացվում է, իսկ ակցեպտավորումից բխող միջոցների փոխանցման կողմերի իրավունքներն ու պարտականությունները դադարում են:

Վճարման հանձնարարականը կարող է չեղյալ համարվել սույն օրենքին համապատասխան, ուղարկողի կամ դատարանի կողմից տրված՝ վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի հիման վրա:

2. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականն ուղարկվում է ստացող բանկին՝ (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) վերջինիս հետ ուղարկողի պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով սահմանված կարգով: Պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով կարող են սահմանվել վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի վավերապայմանները:

3. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականն ակցեպտավորելը վճարման հանձնարարականը չեղյալ համարելու պարտավորությունը ստանձնելն է: Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականի ակցեպտավորումը բացառում է տվյալ վճարման հանձնարարականի հետագա ակցեպտավորումը:

4. Վճարման հանձնարարականի չեղյալ համարելու հանձնարարականը վավեր է և ենթակա է ակցեպտավորման, եթե այն՝

ա) համապատասխանում է սույն հոդվածի 2 կետի պահանջներին, և

բ) ստացող բանկի կողմից ստացվել է վերջինիս՝ մինչև տվյալ վճարման հանձնարարականն ակցեպտավորելը համապատասխան գործողություն ձեռնարկելու հնարավորություն ընձեռող եղանակով և ժամկետում:

5. Վճարման հանձնարարականն ակցեպտավորելուց հետո այն չեղյալ համարելու հանձնարարականը ենթակա է ակցեպտավորման սույն հոդվածի 6 և 7 կետերով նախատեսված դեպքերում, եթե ստացող բանկը համաձայնում է այն ակցեպտավորել, կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոնները թույլ են տալիս այն ակցեպտավորել առանց ստացող բանկի համաձայնության:

6. Շահառուի բանկից բացի, ստացող այլ բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի վերաբերյալ տրված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը չի կարող ակցեպտավորվել, քանի դեռ ստացող բանկի կողմից համապատասխանորեն ուղարկված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը հաջորդ ստացող

բանկի կողմից ակցեպտավորված չէ:

7. Շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի վերաբերյալ տրված վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարականը չի կարող ակցեպտավորվել, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վճարման հանձնարարականն ուղարկվել է՝

ա) ի կատարումն մի վճարման հանձնարարականի, որը չի ուղարկվել դրանում որպես ուղարկող նշված անձի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից, կամ

բ) ուղարկողի սխալի հետևանքով՝

- սխալմամբ ուղարկվել է նախկինում ուղարկողի կողմից ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակը, կամ

- վճարման հանձնարարականում սխալմամբ նշվում է վճարողից վճարում ստանալու իրավունք չունեցող շահառուն, կամ

- վճարման հանձնարարականում սխալմամբ նշվում է ավելի մեծ գումար, քան շահառուն իրավունք ունի ստանալ վճարողից:

Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու դեպքում շահառուի բանկն իրավունք ունի շահառուին վճարված գումարը հետ պահանջել՝ օրենքով սահմանված կարգով:

8. Վճարման հանձնարարականում նշված կատարման կամ վճարման օրվանից հետո հինգերորդ գործառնական օրվա ավարտի պահին չակցեպտավորված վճարման հանձնարարականը չեղյալ է համարվում:

9. Ակցեպտավորված վճարման հանձնարարականը սույն հոդվածի 5, 6 և 7 կետերի համաձայն չեղյալ համարելու հանձնարարականն ակցեպտավորելու դեպքում ուղարկողը պարտավոր է հատուցել վճարման հանձնարարականը չեղյալ համարելու կամ դրա փորձի հետևանքով ստացող բանկին պատճառած վնասները և նրա կատարած ծախսերը, եթե պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով այլ բան նախատեսված չէ:

10. Ուղարկողի մահվան, նրան անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, նրա վերակազմավորման կամ լուծարման դեպքում տվյալ ուղարկողի վճարման հանձնարարականն ուժը կորցնում է, եթե ստացող բանկն իմացել է վերոհիշյալ փաստերի մասին տվյալ վճարման հանձնարարականն ակցեպտավորելուց առաջ և անհրաժեշտ գործողություն ձեռնարկելու հնարավորություն է ունեցել:

11. Պայմանագրերը կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոնները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն հոդվածի 7 կետին:

Հոդված 18. ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆ

ԱԿՑԵՊՏԱՎՈՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ստացող բանկը պարտավոր չէ ակցեպտավորել վճարման հանձնարարականը, եթե ուղարկողի հետ կնքված պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով նման պարտականություն նախատեսված չէ:

2. Ակցեպտավորումից բխող սույն օրենքով սահմանված պատասխանատվությունը ծագում է միայն սույն օրենքի 15 հոդվածին համապատասխան վճարման հանձնարարականը ակցեպտավորելուց հետո: Բանկի պատասխանատվության սահմանները և չափը սահմանվում են սույն օրենքով, եթե պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով այլ բան սահմանված չէ: Բանկերի՝ սույն օրենքով սահմանված պատասխանատվությունը չի կարող մեղմացվել պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով:

3. Ստացող բանկն ակցեպտավորված վճարման հանձնարարականն ուղարկողի կամ դրանում նշված շահառուի ներկայացուցիչը (գործակալը) չէ:

Գ Լ ՈՒ Խ III

ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՈՂԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 19. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ և ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԸ

1. Վճարման հանձնարարականը համարվում է ստացող բանկի (շահառուի բանկից բացի) կողմից կատարված, երբ բանկը վճարման հանձնարարական է ուղարկում՝ ի կատարումն ստացված վճարման հանձնարարականի: Շահառուի բանկի կողմից ստացված վճարման հանձնարարականն ակցեպտավորվում է, բայց չի կատարվում:

2. Վճարման հանձնարարականի կատարման օր է համարվում վճարման հանձնարարականի ստացման օրը կամ դրան անմիջապես հաջորդող այն օրը, երբ ստացող բանկը վճարման հանձնարարականներ է ուղարկում կամ կարող էր ուղարկել՝ ի կատարումն ուղարկողի վճարման հանձնարարականի:

Վճարման հանձնարարականի կատարման օրը չի կարող նախորդել տվյալ վճարման հանձնարարականի ստացման օրվան:

Եթե վճարման հանձնարարականում նշված է միայն վճարման օրը, ապա կատարման օր է համարվում վճարման օրը կամ գործառնական այն օրը, երբ ստացող բանկի կողմից համապատասխան վճարման հանձնարարականի ուղարկումն անհրաժեշտ է՝ վճարման օրը շահառուին վճարումը կատարելու համար:

Հոդված 20. ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ

1. Բացառությամբ սույն հոդվածի 2, 3 և 4 կետերով սահմանված դեպքերի, ստացող բանկը սույն օրենքի 15 հոդվածի համաձայն ակցեպտավորված վճարման հանձնարարականը կատարելիս պարտավոր է՝

ա) կատարման օրվա ընթացքում ուղարկել ուղարկողի վճարման հանձնարարականին համապատասխանող վճարման հանձնարարական և կատարել ուղարկողի վճարման հանձնարարականի պահանջները՝ այն ուղարկելու եղանակի և ուղարկման համար ընտրված միջնորդ բանկերի և միջոցների փոխանցումների համակարգի վերաբերյալ.

բ) վճարման հանձնարարականն ուղարկել իր համար հնարավոր արագ եղանակով, եթե վճարման հանձնարարականն այդպիսի պահանջ է նախատեսում: Եթե ուղարկողի վճարման հանձնարարականում նշված է վճարման օրը, բայց չի նշված կատարման օրը, ապա ստացող բանկը պարտավոր է իր վճարման հանձնարարականն ուղարկել այնպիսի ժամկետում և եղանակով, որոնք անհրաժեշտ են՝ շահառուին վճարման օրը կամ դրանից հետո հնարավոր կարճ ժամկետում վճարումն ապահովելու համար:

2. Ստացող բանկը վճարման հանձնարարականը կատարելիս, գործելով բարեխղճորեն, կարող է ինքնուրույն ընտրել միջնորդ բանկերը կամ միջոցների փոխանցումների համակարգը, եթե ուղարկողի վճարման հանձնարարականում այլ բան նախատեսված չէ:

3. Վճարման հանձնարարականում ուղարկման որոշակի եղանակ նախատեսված լինելու դեպքում ստացող բանկը պարտավոր է ուղարկել իր վճարման հանձնարարականը տվյալ եղանակով կամ նույնչափ արագ եղանակով:

4. Ստացող բանկն առանց ուղարկողի համաձայնության իրավունք չունի ուղարկողի վճարման հանձնարարականի գումարի հաշվին հատուցել իր կողմից մատուցված ծառայությունները:

Հոդված 21. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՍԽԱԼ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Եթե ստացող բանկը կատարել է ուղարկողի վճարման հանձնարարականը՝

ա) դրանում նախատեսված գումարից ավելի մեծ գումար նախատեսող վճարման հանձնարարական ուղարկելով, կամ՝

բ) նախկինում ուղարկված վճարման հանձնարարականի կրկնօրինակը ուղարկելով,

ապա ուղարկողը պարտավոր է վճարել ստացող բանկին միայն ուղարկողի վճարման հանձնարարականի գումարը՝ սույն օրենքի 25 հոդվածի 2 կետի

համաձայն, եթե այդ կետով սահմանված մնացած պայմանները բավարարված են: Բանկն իրավունք ունի շահառուից հետ պահանջել սխալ վճարման հանձնարարականով ստացված գումարի և ուղարկողի վճարման հանձնարարականի գումարի տարբերությունը՝ օրենքով սահմանված կարգով:

2. Եթե ստացող բանկը կատարել է ուղարկողի վճարման հանձնարարականը՝ դրանում նախատեսված գումարից ավելի փոքր գումար նախատեսող վճարման հանձնարարական ուղարկելով, ապա ուղարկողը պարտավոր է ստացող բանկին վճարել ուղարկողի վճարման հանձնարարականի գումարը սույն օրենքի 25 հոդվածի 2 կետի համաձայն, եթե՝

ա) սույն օրենքի 25 հոդվածի 2 կետով սահմանված մնացած պայմանները բավարարված են, և

բ) ստացող բանկն ուղղում է սխալը՝ ուղարկողի վճարման հանձնարարականում նշված շահառուի օգտին լրացուցիչ վճարման հանձնարարական ուղարկելով:

Եթե ստացող բանկը սխալը չի ուղղում, ապա իր կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի ուղարկողը պարտավոր է ստացող բանկին վճարել միայն սխալ վճարման հանձնարարականի գումարը:

Սույն կանոնը չի կիրառվում այն դեպքերում, երբ ստացող բանկը կատարել է ուղարկողի վճարման հանձնարարականը՝ դրանում նախատեսված գումարից ավելի փոքր գումար նախատեսող վճարման հանձնարարական ուղարկելով, ուղարկողի հրահանգի համաձայն իր (ստացող բանկի) ծառայության և ծախսերի դիմաց վճարում (հատուցում) ստանալու հետևանքով:

3. Եթե ստացող բանկը կատարել է ուղարկողի վճարման հանձնարարականը՝ դրանում չնշված շահառուի անունով վճարման հանձնարարական ուղարկելով, և միջոցների փոխանցումն ավարտվել է սխալ վճարման հանձնարարականի համաձայն, ապա սխալ կատարված վճարման հանձնարարականն ուղարկողը և նրան նախորդող բոլոր ուղարկողները պարտավոր չեն վճարել իրենց կողմից ուղարկված վճարման հանձնարարականների գումարը: Սխալ վճարման հանձնարարական ուղարկած բանկն իրավունք ունի իր վճարման հանձնարարականում նշված շահառուից հետ պահանջել հիշյալ վճարման հանձնարարականի գումարը՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 22. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՍԽԱԼ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՈՒՂԱՐԿՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե սույն օրենքի 21 հոդվածի համապատասխան սխալ կատարված վճարման հանձնարարական ուղարկողը ստացող բանկի կողմից տեղեկացվել է (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) վճարման հանձնարարականն ակցեպտավորելու կամ ուղարկողի հաշիվը դեբետագրելու մասին, ապա ուղարկողը պարտավոր է հնարավոր կարճ ժամկետում, բայց ոչ ուշ,

քան վերոհիշյալ տեղեկացումն ստանալու պահից վաթսուն օրվա ընթացքում, բացահայտել սխալը և այդ մասին անմիջապես հայտնել ստացող բանկին: Հակառակ դեպքում ուղարկողը զրկվում է իրեն վերադարձման ենթակա գումարի վրա, սույն օրենքի 25 հոդվածի 3 կետի համաձայն, մինչև ստացող բանկի կողմից իր սխալը հայտնաբերելու պահը հաշվարկվող տոկոսները ստանալու իրավունքից: Ստացող բանկն իրավունք չունի ուղարկողից հատուցում պահանջել՝ ուղարկողի կողմից սույն հոդվածով սահմանված իր պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հոդված 23. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ստացող բանկի՝ սույն օրենքի 20 հոդվածով սահմանված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով շահառուին կատարվելիք վճարումն ուշացնելու դեպքում ստացող բանկը պարտավոր է տվյալ փոխանցման վճարողին կամ շահառուին ուշացված գումարի դիմաց տոկոսներ վճարել:

2. Եթե ստացող բանկի՝ սույն օրենքի 20 հոդվածով սահմանված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով փոխանցումը չի ավարտվել կամ չի կատարվել ուղարկողի կողմից նշված միջնորդ բանկերի միջոցով, կամ վճարողի վճարման հանձնարարականի պայմաններին չհամապատասխանող վճարման հանձնարարական է ուղարկվել, ապա ստացող բանկը պարտավոր է հատուցել դրա հետևանքով վճարողին պատճառված բոլոր վնասներն այն չափով, որքանով դրանք չեն հատուցվել սույն հոդվածի 1 կետի համաձայն:

3. Սույն հոդվածի 1 և 2 կետերով նախատեսված դեպքերում ստացող բանկը պարտավոր է հատուցել իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով ուղարկողին պատճառված վնասները, այդ թվում՝ ուղարկողի կատարած բոլոր ծախսերը՝ ներառյալ իրավաբանական ծառայության վարձատրության գումարը:

4. Եթե ստացող բանկը պայմանագրով պարտավորվել է ակցեպտավորել ուղարկողի վճարման հանձնարարականը, սակայն պայմանագրում վճարման հանձնարարականի մերժման կամ չակցեպտավորման հիմքերի բացակայության պարագայում չի ակցեպտավորում այն, ապա ստացող բանկը պարտավոր է հատուցել չակցեպտավորելու հետևանքով ուղարկողին պատճառված վնասները՝ ներառյալ իրավաբանական ծառայության վարձատրության գումարը:

5. Ստացող բանկի՝ սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունը պայմանագրով կամ համակարգի կանոններով խստացվել չի կարող:

Գ Լ ՈՒ Խ IV

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Հոդված 24. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՎՃԱՐՄԱՆ ՕՐԸ

Վճարման հանձնարարականի վճարման օրը գործառնական այն օրն է, երբ վճարման հանձնարարականի գումարը ենթակա է վճարման շահառուին՝ շահառուի բանկի կողմից:

Վճարման օրը կարող է նշված լինել վճարման հանձնարարականում, որը, սակայն, չի կարող նախորդել շահառուի բանկի կողմից տվյալ վճարման հանձնարարականի ստացման օրվան:

Վճարման օրը վճարման հանձնարարականում նշված չլինելու դեպքում այդպիսին է համարվում շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ստացման օրը:

Հոդված 25. ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՈՒՂԱՐԿՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականն ակցեպտավորելը պարտավորեցնում է ուղարկողին վճարել վճարման հանձնարարականի գումարը, ընդ որում, ուղարկողը պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը մինչև վճարման օրը:

2. Բացառությամբ սույն հոդվածի 4 կետով և սույն օրենքի 22 հոդվածով նախատեսված դեպքերի, ստացող բանկի (բացի շահառուի բանկից) կողմից վճարման հանձնարարականն ակցեպտավորելը պարտավորեցնում է ուղարկողին վճարել վճարման հանձնարարականի գումարը, ընդ որում, ուղարկողը պարտավոր չէ վճարել վճարման հանձնարարականի գումարը մինչև իր վճարման հանձնարարականի կատարման օրը: Տվյալ ուղարկողն ազատվում է ստացող բանկին իր վճարման հանձնարարականի գումարը վճարելու պարտավորությունից, եթե միջոցների փոխանցումը չի ավարտվել շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը՝ դրանում նշված շահառուի օգտին ակցեպտավորելով,

3. Ստացող բանկը պարտավոր է ուղարկողին վերադարձնել ուղարկողի վճարած այն գումարը, որն ուղարկողը պարտավոր չէր վճարել: Ստացող բանկը պարտավոր է նաև այդ գումարի դիմաց տոկոսներ վճարել՝ հաշվարկված այդ գումարն ուղարկողի կողմից ստացող բանկին վճարվելու պահից, բացառությամբ սույն օրենքի 10 և 22 հոդվածներով նախատեսված դեպքերի:

4. Եթե՝

ա) միջոցների փոխանցումը չի ավարտվել շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը՝ դրանում նշված շահառուի օգտին

ակցեպտավորելով, և

բ) միջնորդ բանկը պարտավոր է վերադարձնել վճարման հանձնարարականի գումարը սույն հոդվածի 3 կետի համաձայն, բայց չի կատարում այդ պարտականությունը սույն օրենքի 16 հոդվածի 3 կետով նախատեսված դեպքերից որևէ մեկի կամ այլ օրենքի հիման վրա,

ապա այն ուղարկողը, որը կատարել է տվյալ միջնորդ բանկի միջոցով փոխանցումը կատարելու պայման նախատեսող վճարման հանձնարարականը (հոդված 20, 1 կետ, «ա» ենթակետ)՝ իրավունք ունի պահանջել վճարման հանձնարարականի գումարը տվյալ վճարման հանձնարարականն ուղարկողից: Միջնորդ բանկին սույն հոդվածի 3 կետի համաձայն վճարում կատարած բանկի պահանջի իրավունքն անցնում է տվյալ միջնորդ բանկի միջոցով փոխանցումը նախատեսող առաջին վճարման հանձնարարականն ուղարկողին:

5. Ուղարկողի՝ վճարելու պարտավորությունից ազատվելու (2 կետ) և վճարում ստանալու (3 կետ) իրավունքները չեն կարող փոփոխվել պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով:

6. Սույն հոդվածի դրույթները գործում են այնքանով, որքանով սույն օրենքի 11 և 13 հոդվածներով այլ բան սահմանված չէ:

Հոդված 26. ՈՒՂԱՐԿՈՂԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻՆ

1. Ստացող բանկին վճարելու ուղարկողի սույն օրենքի 25 հոդվածով սահմանված պարտավորությունը կատարված է համարվում, երբ վճարումը տեղի է ունենում սույն հոդվածին համապատասխան:

2. Եթե ուղարկողը բանկ է, ապա ուղարկողի վճարումը կատարված է համարվում, երբ ստացող բանկը ստանում է պարտավորության վերջնահաշվարկը Կենտրոնական բանկի կամ միջոցների փոխանցումների համակարգի միջոցով:

3. Եթե ուղարկողը բանկ է և կրեդիտագրում է ստացող բանկի՝ իր մոտ կամ այլ բանկում գտնվող հաշիվը, ապա ուղարկողի վճարումը կատարված է համարվում այն պահից, երբ կրեդիտագրված գումարը հաշվից դուրս է գրվում կամ (եթե գումարը դուրս չի գրվում) այն օրացուցային օրվա ավարտին, որի ընթացքում կրեդիտագրված գումարը կարող էր դուրս գրվել, և ստացող բանկը տեղյակ էր այդ մասին:

4. Եթե ստացող բանկը դեբետագրում է ուղարկողի՝ իր մոտ գտնվող հաշիվը, ապա ուղարկողի վճարումը կատարված է համարվում հաշվի դեբետագրման պահից, ընդ որում, վճարումը կատարված է համարվում այն ծավալով, որով հաշվի մնացորդը բավարար է ստացող բանկի պահանջը բավարարելու համար:

5. Եթե ուղարկողը և ստացող բանկը փոխադարձ պարտավորությունների հաշվակցում նախատեսող միջոցների փոխանցումների համակարգի անդամներ

են, ապա ուղարկողի վճարումը կատարված է համարվում ստացող բանկի կողմից համակարգի կանոններով սահմանված կարգով պարտավորությունների վերջնահաշվարկը ստանալու պահից:

6. Ուղարկողի և ստացող բանկի միջև սույն օրենքի 25 հոդվածով նախատեսված փոխադարձ պարտավորությունները հաշվակցելու պայմանագրի առկայության դեպքում ուղարկողի վճարումը կատարված է համարվում տվյալ պայմանագրով սահմանված կարգով հաշվակցումը կատարելու պահից՝ հաշվակցված պարտավորությունների ծավալով:

7. Սույն հոդվածով չնախատեսված դեպքերում ստացող բանկին վճարելու ուղարկողի՝ սույն օրենքի 25 հոդվածով սահմանված պարտավորության կատարման պահը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

Հոդված 27. ՇԱՀԱՌՈՒԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ և ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Շահառուի բանկը պարտավոր է իր կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը շահառուին վճարել վճարման օրը, բացառությամբ սույն օրենքի 17 հոդվածով և 28 հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերի: Եթե շահառուի բանկը վճարման հանձնարարականն ակցեպտավորել է միջոցների փոխանցման գործառնական օրվա ավարտից հետո, ապա պարտավոր է վճարման հանձնարարականում նշված գումարը շահառուին վճարել միջոցների փոխանցման հաջորդ գործառնական օրվա ընթացքում,

Շահառուի բանկը պարտավոր է հատուցել շահառուի կրած բոլոր այն վնասները, որոնք հետևանք են եղել շահառուի բանկի կողմից շահառուի նկատմամբ վճարման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, եթե շահառուի բանկը չապացուցի, որ շահառուի նկատմամբ իր պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հետևանք է եղել շահառուի՝ տվյալ վճարումն ստանալու իրավունքի վերաբերյալ իր ունեցած հիմնավոր կասկածի:

2. Եթե շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի համաձայն վճարման հանձնարարականի գումարը ենթակա է վճարման (կրեդիտագրման) շահառուի տվյալ բանկում գտնվող հաշվին, ապա շահառուի բանկը պարտավոր է տեղեկացնել (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) շահառուին վճարման հանձնարարականի ստացման մասին մինչև վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկիզբը: Եթե վճարման հանձնարարականի գումարը ենթակա չէ շահառուի հաշվին կրեդիտագրման, ապա շահառուի բանկը պարտավոր է տեղեկացնել շահառուին միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է վճարման հանձնարարականով:

3. Շահառուի բանկը պարտավոր է տոկոսներ վճարել շահառուին՝ սույն հոդվածի 2 կետով սահմանված կարգով վերջինիս չտեղեկացնելու կամ

ուշացմամբ տեղեկացնելու համար: Տոկոսները հաշվարկվում են վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկզբից մինչև շահառուին տեղեկացնելու օրը ներառյալ: Շահառուի բանկը պատասխանատվություն չի կրում շահառուի կրած վնասների համար, որոնք հետևանք են շահառուի բանկի կողմից շահառուին չտեղեկացնելու կամ ուշացումով տեղեկացնելու, բացառությամբ սույն կետով նախատեսված տոկոսների վճարումը դատական կարգով վիճարկելու հետ կապված պետական տուրքի և իրավաբանական ծառայության վճարների:

Շահառուն համարվում է տեղեկացված համապատասխան տեղեկացումը կամ հաշվի քաղվածքը շահառուին ուղարկելու կամ շահառուի՝ վճարումն ստանալու փաստին այլ կերպ տեղեկանալու պահից: Շահառուն կարող է տեղեկացվել հեռախոսով կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով: Տեղեկացումը կարող է շահառուին ուղարկվել փոստով (պատվիրված կամ հուսալի այլ նամակով): Բանկը պարտավոր է տեղեկացման այնպիսի միջոց ընտրել և եղանակ կիրառել, որոնք կապահովեն շահառուի կողմից տեղեկացման ստանալը:

4. Վճարումը և վնասների հատուցում ստանալու շահառուի սույն հոդվածի 1 կետով սահմանված իրավունքը չեն կարող փոփոխվել պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով: Տեղեկացում և տոկոսներ ստանալու շահառուի սույն հոդվածի 2 և 3 կետերով նախատեսված իրավունքները կարող են փոփոխվել պայմանագրով կամ միջոցների փոխանցման համակարգի կանոններով, եթե շահառուն տեղեկացվել է տվյալ պայմանագրի կամ կանոնների համապատասխան դրույթի մասին մինչև միջոցների փոխանցումն սկսելը:

Հոդված 28. ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՇԱՀԱՌՈՒԻՆ

1. Շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականում նշված շահառուի հաշիվը կրեդիտագրելու դեպքում շահառուի բանկի՝ սույն օրենքի 27 հոդվածի I կետով սահմանված պարտավորությունը կատարված է համարվում այն պահին և այն ծավալով, երբ և որ չափով՝

ա) շահառուին սույն օրենքի 27 հոդվածի 2 կետով սահմանված կարգով տեղեկացվում է իր հաշվին կրեդիտագրված գումարը դուրս գրելու շահառուի իրավունքի մասին, կամ

բ) վճարման հանձնարարականի գումարը շահառուի բանկն ուղղում է շահառուի առկա պարտավորությունների կատարմանը՝ սույն օրենքի 31 հոդվածի համաձայն, կամ՝

գ) վճարման հանձնարարականում նշված գումարը տրամադրում է շահառուի տնօրինմանը:

2. Եթե շահառուի բանկը շահառուի հաշիվը կրեդիտագրելով չի կատարում վճարումը, շահառուի բանկի՝ սույն օրենքի 27 հոդվածով նախատեսված պարտավորության կատարման պահը որոշվում է Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

3. Շահառուի հետ կնքված պայմանագրի այն դրույթը, որի համաձայն շահառուի բանկը իրավունք ունի շահառուից պահանջել վերջինիս վճարած վճարման հանձնարարականի գումարը, եթե շահառուի բանկն այն չի ստացել ուղարկողից՝ անվավեր է, բացառությամբ սույն հոդվածի 4 կետով սահմանված դեպքերի:

4. Միջոցների փոխանցման համակարգի կանոնները կարող են նախատեսել շահառուներին կատարվող պայմանական վճարումներ՝ մինչև շահառուի բանկի ակցեպտավորած վճարման հանձնարարականում նշված գումարը շահառուի բանկի կողմից ստանալը: Շահառուին միջոցների փոխանցման համակարգի կանոններով նախատեսված պայմանական վճարում կատարելու դեպքում շահառուն պարտավոր է շահառուի բանկին վերադարձնել ստացված գումարը, եթե՝

ա) մինչև միջոցների փոխանցումն սկսելը, վճարողը և շահառուն տեղեկացվել են, որ վճարումը լինելու է պայմանական, և

բ) վճարողի բանկը, շահառուի բանկը և շահառուն համաձայնել են կիրառել պայմանական վճարումներ նախատեսող կանոնները, և

գ) շահառուի բանկն իր կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը ուղարկողից չի ստացել:

Եթե շահառուն սույն կետի առաջին պարբերության համաձայն պարտավոր է ստացված գումարը վերադարձնել շահառուի բանկին, ապա շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականի ակցեպտավորումն ուժը կորցնում է, վճարման հանձնարարականը չեղյալ է համարվում, իսկ վճարողի կողմից սույն օրենքի 29 հոդվածով նախատեսված վճարումը շահառուին համարվում է չկատարված:

Հոդված 29. ՎՃԱՐՈՂԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՇԱՀԱՌՈՒԻՆ: ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Բացառությամբ սույն օրենքի 17 հոդվածով և 28 հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերի, վճարողի վճարումը շահառուին կատարված է համարվում շահառուի բանկի կողմից վճարման հանձնարարականը շահառուի օգտին ակցեպտավորելու պահից՝ շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարի չափով, բայց ոչ ավելի, քան վճարողի վճարման հանձնարարականի գումարը:

2. Եթե վճարողի կողմից սույն հոդվածի I կետով նախատեսված վճարումը կատարվում է վճարողի՝ շահառուի նկատմամբ ունեցած պարտավորության (հիմնական պարտականություն) կատարման նպատակով, ապա վճարողի պարտավորությունը համարվում է կատարված, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) սույն հոդվածի I կետով նախատեսված վճարումը կատարված է հիմնական պարտավորությունն առաջացնող պայմանագրին հակասող ձևով կամ միջոցով, և

բ) շահառուն շահառուի բանկից վճարման հանձնարարականն ստանալու մասին տեղեկացումն ստանալուց հետո անմիջապես տեղեկացնում է վճարողին վճարումն ընդունելուց հրաժարվելու մասին, և

գ) վճարման հանձնարարականի գումարը շահառուն իր հաշվից դուրս չի գրել կամ այն չի ուղղվել շահառուի այլ պարտավորությունների մարմանը, և

դ) վճարումը պայմանագրի համաձայն չկատարելու հետևանքով շահառուն վնաս կկրի:

Եթե վճարողի կողմից սույն հոդվածի 1 կետով նախատեսված վճարումը չի հանգեցնում վճարողի հիմնական պարտավորության կատարմանը, ապա շահառուի բանկից վճարումն ստանալու շահառուի՝ սույն օրենքի 27 հոդվածով նախատեսված իրավունքն անցնում է վճարողին:

3. Եթե շահառուի բանկի ակցեպտավորած վճարման հանձնարարականի գումարը պակաս է վճարողի վճարման հանձնարարականի գումարից, որը հետևանք է միջոցների փոխանցման մասնակից՝ ստացող մեկ կամ ավելի բանկերի կողմից մատուցված ծառայությունների դիմաց հատուցման, ապա վճարողի հիմնական պարտավորությունը կատարված է համարվում նրա կողմից ուղարկված վճարման հանձնարարականի գումարի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարողը շահառուի պահանջով վերջինիս հրաժարվում է վճարել սույն կետի համաձայն պակասեցված գումարը:

4. Վճարողի և շահառուի՝ սույն հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները կարող են փոփոխվել միայն նրանց միջև կնքված պայմանագրով:

Գ Լ Ո Ւ Խ V

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 30. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ և ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Միջոցների փոխանցման մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները կարող են փոփոխվել նրանց միջև կնքված պայմանագրով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոփոխություններն արգելվում են սույն օրենքով:

2. Սույն օրենքի համաձայն միջոցների փոխանցումների համակարգի կանոնները այն կանոններն են, որոնք՝

ա) սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից և կարգավորում են դրա

միջոցների փոխանցման համակարգի միջոցով կատարվող փոխանցումների կողմ հանդիսացող բանկերի իրավունքներն ու պարտականությունները, կամ

բ) սահմանվում են բանկերի կողմից և կարգավորում են դրանց միջոցների փոխանցման համակարգի միջոցով վճարման հանձնարարականների ուղարկումը, ինչպես նաև վճարման հանձնարարականների ուղարկման կապակցությամբ կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

3. Բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, միջոցների փոխանցումների համակարգի կանոնները կարող են փոփոխել տվյալ համակարգի անդամ-բանկերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Միջոցների փոխանցումների համակարգի կանոնները սույն օրենքի 27 հոդվածի 4 կետով, 28 հոդվածի 3 կետով, 35 հոդվածով նախատեսված դեպքերում կարող են փոփոխել նաև համակարգի անդամ չհանդիսացող այլ մասնակիցների՝ սույն օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 31. ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Եթե շահառուի բանկն ստացել է վճարման հանձնարարականը, որի համաձայն շահառուի հաշիվը տվյալ բանկում ենթակա է կրեդիտագրման և շահառուն տվյալ բանկի նկատմամբ ունի պարտավորություն, որի կատարման ժամկետը լրացել է, ապա բանկը կարող է օրենքով սահմանված կարգով միակողմանիորեն հաշվակցել ստացված վճարման հանձնարարականի գումարը իր նկատմամբ ունեցած պարտավորության հետ՝ շահառուի հաշիվը կրեդիտագրելուց հետո:

2. Շահառուի բանկը պարտավոր է շահառուի հաշվին կրեդիտագրված գումարը ուղղել շահառուի նկատմամբ այն պահանջների բավարարմանը, որոնք ենթակա են բավարարման անվիճելիության կարգով, եթե շահառուի բանկը իմացել է կամ պարտավոր էր իմանալ նման պահանջի առկայության մասին: Անվիճելիության կարգով բավարարման ենթակա պահանջները շահառուի միջոցների հաշվին բավարարվում են օրենքով սահմանված հերթականությամբ:

Հոդված 32. ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱԼԱՆՔԻ ԿԱՄ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ: ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՂ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանի որոշմամբ կարող է արգելվել միայն՝

ա) վճարողին՝ վճարման հանձնարարական ուղարկելը.

բ) վճարողի բանկին՝ վճարողի վճարման հանձնարարականներն ակցեպտավորելը.

գ) շահառուի բանկին՝ ակցեպտավորված վճարման հանձնարարականի

միջոցները շահառուի տնօրինմանը հանձնելը.

դ) շահառուին՝ շահառուի բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարն իր հաշվից դուրս գրելը:

Դատարանը չի կարող այլ կերպ միջամտել միջոցների փոխանցումների իրականացմանը կամ արգելել դրա հետ կապված այլ գործողություններ:

2. Եթե ուղարկողի՝ ստացող բանկում գտնվող հաշվի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել, ապա ստացող բանկը տվյալ ուղարկողի վճարման հանձնարարականն ակցեպտավորելու դեպքում իրավունք ունի վճարման հանձնարարականի գումարն առաջնահերթության կարգով գանձել տվյալ հաշվից, բացառությամբ այն դեպքերի, երբ կալանքը կամ արգելանքը հաշվի վրա դրվել է՝ ստացող բանկին մինչև վճարման հանձնարարականն ակցեպտավորելը վճարման հանձնարարականը մերժելու կամ անհրաժեշտ այլ գործողություններ կատարելու հնարավորություն ընձեռող ժամկետում և եղանակով, կամ եթե ուղարկողը վճարման հանձնարարականի գումարը վճարել է ստացող բանկին այլ եղանակով:

3. Վճարողի կողմից շահառուին փոխանցվող միջոցների վրա կալանք կամ արգելանք կարող է դրվել միայն շահառուի բանկում:

Հոդված 33. ՀԱՇԻՎԸ: ՀԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴԸ: ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն օրենքի համաձայն հաշիվը միջոցների փոխանցման մասնակցի բանկում գտնվող այն հաշիվն է, որից վճարման հանձնարարականի գումարը ենթակա է գանձման՝ հաճախորդի վճարման հանձնարարականի կամ առանձին հրահանգի համաձայն: Եթե հաճախորդը վճարման հանձնարարականում հաշիվ չի նշել և հաշվի վերաբերյալ այլ հրահանգ չի տվել, ապա վճարման հանձնարարականի գումարը կարող է գանձվել իր տվյալ բանկում գտնվող ցանկացած հաշվից, բացառությամբ այն հաշիվների, որոնցից վճարման հանձնարարականի գումարի գանձումը հակասում է այդ հաշվի սպասարկման պայմանագրին կամ տվյալ հաշվի մնացորդի տնօրինման այլ սահմանափակումներին:

2. Սույն օրենքի իմաստով «հաշվի մնացորդը» տվյալ հաշվում առկա այն միջոցներն են (ցպահանջ կամ ժամկետային), որոնք հաշվետերը (հաճախորդը) կամ նրա կողմից լիազորված անձը կարող է հաշվից դուրս գրել կամ այլ կերպ տնօրինել առանց լրացուցիչ սահմանափակումների: Հաշվի ժամկետայնությունը սույն կետի իմաստով սահմանափակում չի համարվում, եթե հաշվի սպասարկման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3. Ուղարկողի հաշվից վճարման ենթակա մեկից ավելի վճարման հանձնարարականներ ստանալու դեպքում բանկը կարող է վճարման

հանձնարարականները կատարելու կապակցությամբ ուղարկողի հաշիվը դեբետագրել ցանկացած հերթականությամբ:

4. Եթե հաշվետերն իր հաշվին կրեդիտագրված միջոցները դուրս է գրում հաշվից կամ դրանք ուղղվում են նրա պարտավորությունների կատարմանը, ապա հաշվին առաջինը կրեդիտագրված միջոցները համարվում են հաշվից առաջինը դուրս գրված կամ պարտավորությունների կատարմանն ուղղված:

Հոդված 34. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՉԱՓԸ և ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ստացող բանկի կողմից սույն օրենքով սահմանված դեպքերում վճարման ենթակա տոկոսների չափը որոշվում է ուղարկողի և ստացող բանկի միջև կնքված պայմանագրով կամ միջոցների փոխանցումների համակարգի կանոններով:

2. Եթե ուղարկողի և ստացող բանկի միջև կնքված պայմանագիրը կամ միջոցների փոխանցման համակարգի կանոնները չեն որոշում ուղարկողին ստացող բանկի կողմից վճարման ենթակա տոկոսի չափը, ապա այդ տոկոսը հաշվարկվում է՝

ա) համապատասխան գումարը բազմապատկելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքով՝ արդյունքը բաժանելով 360-ի, կամ

բ) համապատասխան գումարը բազմապատկելով ստացող բանկի կողմից ժամկետային ավանդների դիմաց առաջարկված միջին տոկոսով՝ արդյունքը բաժանելով 360-ի,

ընդ որում, ստացող բանկի կողմից վճարման ենթակա տոկոսների չափը որոշելիս հիմք է ընդունվում սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված հաշվարկման այն կարգը, որի արդյունքում վճարման ենթակա տոկոսն առավել մեծ է:

Հոդված 35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋև ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Միջոցների փոխանցումների՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ մասնակիցների միջև միջոցների փոխանցումները կարգավորվում են ստացող բանկի գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան, եթե կողմերի միջև պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Շահառուի և շահառուի բանկի միջև միջոցների փոխանցումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի բանկի գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան, եթե պայմանագրով կամ համակարգի կանոններով այլ բան նախատեսված չէ:

Գ Լ ՈՒ Խ VI

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 36. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. Կենտրոնական բանկին՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի միջև կատարվող միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետները և այդ ժամկետները խախտելու համար բանկերի պատասխանատվությունը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ **Լ. Տեր-Պետրոսյան**

7 հունվարի 1997 թվականի,

քաղ. Երևան

ՀՕ-100